



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
СОЮЗ ДОБРОВОЛЬЦЕВ ЕРКАРА

REPUBLIC OF ARMENIA
UNION OF YERKRAPAN VOLUNTEERS

Երևան, Արշակունյաց 22
Հեռ՝ 56-53-06, 58-23-58

«23» 01 2018

թիվ 01/14

**ՀՀ ԿՐԹՈՐԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Ն.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն նախարար.

Եռասնրունդ Երկրապահ կամավորականների միության, Հանրապետության բոլոր նրկրապահների, «Տ-րդ» բրիգադ եւ ազատամարտիկները կառույցի, պատանի, նրիտասարդ նրկրապահների, նրանց ծնողների եւ իմ անունից խորին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ՝ Կրթության նախարարության միջոցով պատանի, նրիտասարդ նրկրապահների հայրենասիրական դաստիարակության նպատակով ԵԿՄ-ին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար եւ համառոտ ներկայացնում եմ, թե՛ ինչ նպատակներով եմ օգտագործվել հատկացված միջոցները:

Հսկայաժառվալ աշխատանք կատարվեց դեկտեմբերի 20-ից 2018թ.-ի հունվարի 15-ն ընկած ժամանակահատվածում: ԵԿՄ պատվիրակությունները, նվերներով, Ձմեռ պապների, Ձյունանուշների ուղեկցությամբ, եղան Հայաստանի, Արցախի սահմանամերձ բնակավայրերում, բոլոր զորամասերում, առաջնագծի հենակետերում, բոլոր հիվանդանոցներում, հոսպիտալներում, ծննդատներում, մանկատներում, ծերանոցներում, կալանավայրերում: Եռասնրունդ նրկրապահները նվերներով այցելել են մտավորականների, զոհվածների, անհայտ կորածների, հաշմանդամների ընտանիքներ: Այս ակցիան եւս ամենամյա է:

Վարչությունում եւ Հանրապետության ու Արցախի բոլոր մարզերում, բոլոր տարածքներում բազմազան միջոցառումներով նշել ենք Բանակի օրը: Մարտի 5-ին Սպարապետ Վազգեն Մարգարյանի ծննդյան օրվա եւ պատանի նրկրապահների նրդման կապակցությամբ նույնպես բազմազան միջոցառումներ ենք անցկացրել: Միայն Միծեռնակաբերդի բարձունքում Երևանից եւ բոլոր մարզերից տասը հազարից ավելի պատանի եւ աղջիկ է մասնակցել նրդման արարողությանը: Զուգահեռաբար միջոցառումներ կայացել են Հանրապետության բոլոր մարզերում՝ յուրաքանչյուր մարզում նրդման արարողությանը մասնակցել է առնվազն 1 000 պատանի եւ աղջիկ: ԵԿՄ բոլոր մարզային խորհուրդներում եւ տարածքային բաժանմունքներում լայնորեն նշվել են նաեւ Երկրապահի օրը, մայիսյան քառատոնն ու 1918-ի մայիսյան հաղթանակների տարեդարձերը: Մարդարապատում մասնակցել ենք Հանրապետության օրվա միջոցառմանն ու ինքներս էլ տոնական միջոցառումներ կազմակերպել:

Եռասնրունդ Երկրապահ կամավորականների միությունը ուխտագնացություն է կազմակերպել ղևաի ՀՀ եւ Արցախի բոլոր սահմանամերձ բնակավայրեր: Երկրապահի նրկր սերունդները եւ գիտնորթները նրկայացուցիչները այդ թվում զոհված, անհայտ կորած ազատամարտիկների հարազատները, զուգահեռաբար մտավորականները, օրենսդիր, գործադիր մարմինների նրկայացուցիչները այցելել են նրանց սահմանամերձ շրջաններ, բնակավայրեր: Բոլոր տեղեր այցելել ենք նվերներով: Մեր նպատակն էր նշել, որ Արցախում առաջին դասարան հաճախող բոլոր նրկխաներն առաջին անգամ դպրոց են մուտք գործում ԵԿՄ նվիրած, գրենական պիտույքներով լի, պայուսակներով: Ի դեպ, Երկրապահն այս ծրագիրն իրականացնում է ավանդաբար 2000 թվականից: Սահմանամերձ բնակավայրերին նվիրում ենք նաեւ համակարգիչներ, հեռուստացույցներ, նրաժշտական կենտրոններ, սպորտային գույք, հաշմանդամի սայլակներ եւ այլն: Զոհված, անհայտ կորած, հաշմանդամ, սոցիալապես անապահով նրկրապահների ընտանիքներին թե՛ Արցախի, թե՛ Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում

ցույց է տրվել ֆինանսական օգնություն: Բուժկետներին տրվել է առաջին անհրաժեշտության բժշկական պարագաներ և դեղորայք: Ֆինանսություն է ցուցաբերվել Թալիշի վերականգնման ծրագրին, Արցախում հուշարձանների կառուցման և վերականգնման համար: Ուխտագնացություններին մասնակից ենք դարձրել նաև նրազայսմբերի, պարային խմբերի, անհատ նրգիչ-կատարողների՝ սահմանամերձ բնակավայրերում հրավառությամբ ուղեկցվող համերգներ կազմակերպելով:

2017թ. ընթացքում շարունակել ենք Արցախի բոլոր վարչական շրջաններում, Հայաստանի տարբեր տարածքներում, նաև՝ Սփյուռքի գաղթօջախներում ի պատիվ հայոց Մեծ նղննի սրբադասված նահատակների՝ Ջուղայի խաչքարի կրկնօրինակների տեղադրումը՝ որպես ապացույց, որ հայի հավատքը, հայ արվեստը, հայի արարչաստեղծ ոգին անմահ են: Ծրագիրը շարունակական է: Եվ ավանդական ուխտագնացությունների պարտադիր մաս է նաև այս խաչքարերին այցելելը:

Առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել պատանի և նրիտասարդ երկրապահների հայրենասիրական դատերակությանը: Հենց այս ուղղությամբ ենք ներդրել առանձնապես շատ ռեսուրսներ՝ համարելով, որ այդ կերպ մենք նպաստում ենք վաղվա հզոր Հայաստանի, բարեկեցիկ և պաշտպանված Արցախի կայացմանը: ՀՀ նախագահի հանձնարարությամբ նշանակուող երկրապահին հատկացված տարածքը արդեն դարձել է պատանիների և նրիտասարդների ունուցման և հանգստի կենտրոնի: Այս տարածքում շինարարական աշխատանքները շարունակվել են, տնդադրվել են տաղավարներ, խաղային հարմարանքներ, կառուցվել է ճաշարանի հարմարավետ շենք՝ գրադարան, զինհրապարակ և այլն:

2017-ին այստեղ ուսումնամարզական վարժանքներ և հանգիստ են անցել 5600 պատանի երկրապահներ, որոնց կեսը՝ աղջիկներ:

Հավաքներին մասնակցել են նրիտասարդ և ավագ սերնդի երկրապահներ ՀՀ բոլոր տարածքներից և Արցախի բոլոր վարչական շրջաններից, ինչպես նաև՝ պաշտպանության նախարարության սպաների երեխաներ, սիրիահայ երեխաներ, սոցապնախարարության ներկայացրած ցուցակի համապատասխան սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ:

Ամբողջ տարվա ընթացքում հրամանատարասերժանտական դասընթացներ ենք կազմակերպել՝ պրոցեսում ներգրավելով նաև զործրկեր կառույցների՝ պաշտպանության, կրթության և գիտության, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, սպորտի և նրիտասարդության հարցերի, սփյուռքի, արդարադատության, մշակույթի նախարարությունների, ոստիկանության, կադաստրի, փաստաբանների պալատի, մասնագետներին, հայ առաքելական սուրբ եկեղեցու սպասափորներին:

Եվս անգամ շնորհակալություն, ՀՀ Կրթության նախարարությանը, որ Ձեր ֆինանսական աջակցությամբ նշանակուող երկրապահ կամավորականների միությանը հնարավորություն նր ղնծնում ծառայելու ազգին, հայրենիքին, պետությանը:


Կից ներկայացնում են՝

- Ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարության իրականացում ծրագրի շրջանակում 2017 թվականի ընթացքում իրականացված միջոցառումների մասին տարեկան հաշվետվությունը
- Միջոցառումները լուսաբանող տեսաերիզներ ըստ ամիսների

ՀՀ ԵԿՄ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՐԱՆԻ ՀԵՐՈՍ, ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ՝



ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՍԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
СОЮЗ ДОБРОВОЛЬЦЕВ ЕРКРАПА

REPUBLIC OF ARMENIA
UNION OF YERKRAPAH VOLUNTEERS

Երևան, Արշակունյաց 22
Հեռ՝ 56-53-06, 58-23-58

«23» 01 2018

թիվ 01/ԵԿ-1

**Ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարության
իրականացում ծրագրի շրջանակում 2017 թվականի ընթացքում
իրականացված միջոցառումների մասին տարեկան
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

I «Պատանի երկրապահ» ակումբի մարտավարական, կրակային, շարային, սպորտային, առաջին բուժօգնության, հայրենասիրական դաստիարակության, հայ եկեղեցու պատմության և այլ դասընթացների կազմակերպման և անցկացման նպատակով թվով 72 հրամանատարների աշխատավարձի տրամադրում՝ 69 796 000 դրամ:

II «Պատանի երկրապահ» ակումբի մարտավարական, կրակային, շարային, սպորտային, առաջին բուժօգնության, հայրենասիրական դաստիարակության, հայ եկեղեցու պատմության և այլ դասընթացներ, որի կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 23 870 000 դրամ:

I. «Պատանի երկրապահ» ակումբի 2017թ. միջոցառումներ

Ամբողջ տարվա ընթացքում կազմակերպվում են միջոցառումներ փուլերով տեղերում, մարզկենտրոններում և եզրափակիչը Երևանում:

Բոլոր միջոցառումների համար ծախսվել է 14 645 000 դրամ:

1.1 Կանանց և աղջիկների տոնին նվիրված հրաձգության առաջնություն, որին մասնակցել են 22 10 մարզերի և ք. Երեվանի ընդամուր թվով 500 պատանի երկրապահներ /աղջիկներ /: Հրաձգության առաջնության կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 793 000 դրամ:

1.2 «Պատանի երկրապահ» ակումբի 2017թ. միջոցառումներ

Ամբողջ տարվա ընթացքում կազմակերպվել են միջոցառումներ երեք փուլերով տեղերում, մարզկենտրոններում և եզրափակիչը Երևանում:

- Ուժային հնգամարտ 1 փուլ-տարածքային բաժանմունքներում -300 սան
- 2 փուլ-մարզային /փնջային/ առաջնություն-300 սան
- 3 փուլ-եզրափակիչ փուլ-ք. Երևան-300 սան,

որի կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 900 000 ՀՀ դրամ:

Լավագույն վաշտ «Շարային պատրաստություն» մրցույթ

1 փուլ-տարածքային բաժանմունքներում -740 սան

2 փուլ-մարզային /փնջային/ առաջնություն-440 սան

3 փուլ-եզրափակիչ փուլ, ք. Երևան-110 սան/,

որի կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 2 160 000 դրամ:

Ռազմականացված կրոսավազք

1 փուլ-տարածքային բաժանմունքներում – 387 սան

2 փուլ-մարզային /փնջային/ առաջնություն-387 սան

3 փուլ- եզրափակիչ փուլ, ք. Երևան- 99 սան,

որի կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 873 000 դրամ:

Վոյլեյբոլի առաջնություն

1 փուլ-տարածքային բաժանմունքներում – 1040 սան

2 փուլ-մարզային /փնջային/ առաջնություն-640 սան

3 փուլ- եզրափակիչ փուլ, ք. Երևան- 240 սան,

որի կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 1 920 000 դրամ:

Կշռաքարերի առաջնություն

1 փուլ-տարածքային բաժանմունքներում – 370 սան

2 փուլ-մարզային /փնջային/ առաջնություն-220 սան

3 փուլ- եզրափակիչ փուլ, ք. Երևան- 110 սան,

որի կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 910 000 դրամ:

Ս.թ. հուլիս ամսից մինչև տարեվերջ կազմակերպվել և անցկացվել են ՀՀ «Պատանի երկրապահ» ակումբի բոլոր տարածքային բաժանմունքներում միջոցառումներ մեկ փուլով. Բոլոր միջոցառումների համար կատարվել են ծախսեր մասնակից սաների թվին համապատասխան մեկանգամյա սննդի եւ տրանսպորտային ծախսերի հոգալու համար:

- Նկարչության մրցույթ-1 փուլով

տարածքային բաժանմունքներում – 1 800 սան:

- Պարի միջազգային օրին նվիրված մրցույթ-1 փուլով

Կազմակերպվել է տարածքային բաժանմունքներում – 1 320 սան:

- Հայրենասիրական երգի մրցույթ-1 փուլով

տարածքային բաժանմունքներում –1050 սան:

- Ֆուտբոլի մանկապատանեկան առաջնություն.

Միջոցառումը ավանդական է, մասնակիցների թիվը 200 սան:

- Նետաձգության միջազգային առաջնություն
Կազմակերպվել է Ճամբարում – 6 օր x 50սան
- Թաեքվոնդոյի առաջնություն
Կազմակերպվել է Ճամբարում – 7 օր x 30սան

Ընդամենը այդ միջոցառումների կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 4 880 000 դրամ:

1.4 Ս.թ. նոյեմբերի 4-ին Արտաշատ քաղաքում կայացել է Սամբոյի օրվան նվիրված մրցույթ, որին մասնակցել են «Պատանի երկրապահ» ակումբի 150 սան, որի համար ծախսվել է 150 000 դրամ:

1.5 Ս.թ. նոյեմբերի 4-ին տեղի է ունեցել հանրապետական շաքաթօրյակ Պաշտպանության նախարարության համատեղ, որին մասնակցել են «Պատանի երկրապահ» ակումբի ընդհանուր թվով 5260 սան.
Կատարվել են մաքրման աշխատանքներ Հայաստանի Հանրապետության եւ Արցախի զինվորական պանթեոններում, խաչքարերի, հուշարձանների մոտ, որի համար ծախսվել է 1 890 000 դրամ:

1.6 ԱԶԳ-ԲԱՆԱԿ 2017թ համաժողով, որին մասնակցել են թվով 100 պատանի երկրապահներ եւ կատարվել են ծախսեր 169 000 դրամի չափով:

2. Միջոցառումների ամփոփման ընթացքում կատարվում են պարզևատրություններ պատվոգրերի, հուշամեդալների, գավաթների եւ հուշանվերների տեսքով , որի համար ամբողջ տարվա ընթացքում ծախսվել է 2 430 000 դրամ:

3. Հանրապետության բոլոր մարզկենտրոններում, տարածքային բաժանմունքներում, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում անցկացվում է հրամանատարաւերժանտական դասընթացներ եւ եզրափակիչը՝ վարչության շենքում , որի կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 3 000 000 դրամ:

Տվյալ մարզի թվով 300 պատանի երկրապահները հանձնում են քննություններ, ստանում են կոչումներ՝ կտսեր սերժանտ. Յուրաքանչյուր երեխայի համար ծախսվել է տրանսպորտի եւ սննդի ծախսեր 1000 դրամի չափով:

Այդ ուսումնական պրոցեսը կազմակերպելու համար տրվել է ֆինանսական աջակցություն յուրաքանչյուր մարզին 300 000 դրամ:

4. Եռամսյակը մեկ անգամ ամփոփվել է մարզերում արդյունքները, լավագույնները շուրջ 300 պատանի երկրապահներ հանձնել են քննություններ ԵԿՄ վարչությունում եւ ստացել համապատասխան կոչումներ:

Յուրաքանչյուր երեխայի համար կատարվել են տրանսպորտի եւ սննդի համար 1000 դրամի չափով: Ծախսը կազմում է 300 000 դրամ

5. Տպագրական ծախսերը կազմում են 2 295 000 դրամ «Պատանի երկրապահ» սաների համար տպագրվել են ուսումնական ձեռնարկներ, պատատոներ, վկայականներ եւ այլն:

6. Ընթացիկ ծախսերի /տնտեսական ապրանքներ, գրենական պիտույքներ, նկարահանումներ/ համար ծախսվել է 1 200 000 դրամ:

III. Թվով 1000 ՀՀ դպրոցականների այցելություններ պատմական վայրեր, մշակութային

կոթողներ, որի կազմակերպման և անցկացման համար ծախսվել է **30 530 000** դրամ:

1. Ըստ տարածաշրջանների ՀՀ դպրոցականների մասնակցությամբ կազմակերպվել և անց են կացվել մշակութային և մարզական միջոցառումներ, այդ թվում՝

1.1 Երկրապահի օրվան նվիրված միջոցառում, որի կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 5 940 000 դրամ:

1.2 Մայիսյան տոներին նվիրված միջոցառումներ, որի կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 1 100 000 դրամ:

1.3 Այլ միջոցառումներ /ապրիլի 24, երեխաների իրավունքների պաշտպանության օր, անկախության օր, ոճրագործության օր եւ այլն/: Նշված միջոցառումների կազմակերպման և անցկացման համար ծախսվել է 950 000 դրամ:

1.4. Ամանոր

Յուրաքանչյուր տարի Ամանորի կապակցությամբ իրականացվում է ծրագիր՝

ուխտագնացություն Արցախ, ՀՀ մարզեր, որի համար ծախսվել է 2 000 000 դրամ, այսինքն այցելություններ՝ գործամասեր, գոհված, արհեստ կորած, հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքներ, մտավորականներին, մանկատներ, ծնրանոցներ, հիվանդանոցներ, հոսպիտալներ, ծննդատներ, նաև պատրաստվել են Ամանորի Ձմեռ պապի տոպրակներ թվով 2000 հատ:

1. Վերը նշված միջոցառումների պատշաճ կազմակերպման և անցկացման նպատակով «Պատանի երկրապահ» ակումբի թվով 1 600 սաների համար կարվել են համազգեստներ, որի համար ծախսվել է 13 440 000 դրամ:

3. Ուխտագնացություն Արցախ, ազատագրված տարածքներ

ՀՀ պետական տոներին, հիշատակի, պատմական իրադարձությունների օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում և անցկացում, ուխտագնացություններ Արցախ.

ՀՀ մարզերի թվով 500 պատանի երկրապահների համար կազմակերպվել են

այցելություններ Արցախի վարչական շրջաններ՝ այդ թվում Հաղրութի, Մարտունու,

Մարտակերտի, Ասկերանի, Շուշիի, Քարվաճառի, Բերձորի եւ Ստեփանակերտի

պատմական վայրեր, մշակութային եւ կրթական օջախներ, հուշարձան պանթեոններ,

տարածքներում տեղակայված գործամասեր:

Կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ՝ այդ թվում պատանի երկրապահների

երգի եւ պարի խմբերի մասնակցությամբ վերոնշյալ բոլոր վարչական շրջաններում եւ

գործամասներում կազմակերպվել են համերգներ, որի համար ծախսվել է 3 500 000 դրամ:

4. Ուխտագնացություն ՀՀ սահմանամերձ շրջաններ.

Յուրաքանչյուր ամիս ըստ տարածաշրջանների ՀՀ ԵԿՄ 100 պատանի երկրապահների

համար կազմակերպվել է ուխտագնացություն ՀՀ սահմանամերձ շրջաններ. Ընդհանուր

ծախսը տարվա կտրվածքով կազմել է 3 000 000 դրամ, այսինքն 100 սանի հաշվով՝ ամեն մեկի

համար 2 500 դրամ /տրանսպորտային, սննդամթերքի եւ ծաղիկների, ծաղկեպսակների

ծախսեր/.

Վայոց ձորի մարզ՝ Խաչիկ գյուղ, Տավուշի մարզ՝ Բերդի տարածաշրջան, Գեղարքունիքի

մարզ՝ Վարդենիսի տարածաշրջան, Արարատի մարզ՝ Սպարապետի տուն- տանգարան

այդ թվում Եռաբլուր պանթեոն եւ այլն:

5. Ուսումնամարտական պատրաստություն

Կրակային պատրաստություն, շարային պատրաստություն, մարտավարություն, առաջին բուժօգնության դասընթացներ, ֆիզիկական պատրաստություն եւ այլն
Մասնագետներից բաղկացած աշխատանքային խմբերը գործուղվում են մարզեր, տարածքային բաժանմունքներ մեթոդական ցուցումներ տալու նպատակով:
Վարչության կողմից ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն յուրաքանչյուր ամիս 50 000 դրամ, ընդհանուր ծախսը 12 ամսվա ընթացքում կազմել է 600 000 դրամ:

IV Ճամբարային ուսումնավարժական հավաքների

Ճամբարում ուսումնամարզական վարժանքներ և հանգիստ են անցկացնում շուրջ 6 400 եռասերունդ երկրապահ, որից 5 600 պատանի նրկրապահներ ՀՀ բոլոր տարածքներից և Արցախի բոլոր վարչական շրջաններից, ինչպես նաև սիրիահայ երեխաներ եւ սոցնախարարության ներկայացրած ցուցակի համապատասխան սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ այդ թվում՝

3700 մասնակից - ք. Երեւանի բոլոր վարչական շրջաններից եւ ՀՀ մարզերից

1300 մասնակից – Արցախի բոլոր վարչական շրջաններից

500 մասնակից - Պաշտպանության նախարարությունից

100 մասնակից – ՀՀ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից,

ՀՀ Սփյուռքի նախարարությունից,

որի համար ծախսվել է 5 600 000 դրամ:

Յուրաքանչյուր հերթափոխ տեւում է 7 օր, որին մասնակցում են 400 պատանի երկրապահներ:

Ճամբարային հավաքները կազմակերպվում են 14 հերթափոխով:

Ընդհանուր ծախսը կազմել է 129 796 000 դրամ, համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հավելված 2 առ 06.01.2017թ. N 07Ա/2 հրամանի:

ԵՎՄ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ,
ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍ,
ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ՝

Մ.Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ